

Դատական գործ N: ԵՔԴ/0021/01/09

Երբ է գործը ստացվել:	27-01-2009
Քրեական գործի համարը:	ԵՔԴ/0021/01/09
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ
Գործը որտեղից է ստացվել:	
Դատախազություն:	ՀՀ Գլխավոր դատախազություն
Նախաքննական գործի համարը:	58207208
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	Օլիվեր Մարիանը և Դանիել Ֆեռառուն ներգրավվել են բանկային քարտերի կեղծ կրնկօրինակներով բանկամատներից առանձնապես խոշոր չափերի հասնող գումարների հափշտակությամբ մասնագիտացած կազմակերպված խմբի գործունեությանը:

Մեղադրյալ

Անձ		
Անուն	Օլիվեր	
Ազգանուն	Մարիան	
Հայրանուն	Ռադուկու	
Հասցե	Մեծ Բրիտանիա, ք.Լոնդոն, Ռիչարդսոն 200	
Սեռ	Արական	
Ծննդյան ամսաթիվ	24-11-1979	

Հոդված_1

Հոդված	177	Մաս 3	Կետ 1,2
Դատվածություն:	նախկինում դատված		

Պաշտպան

Անուն	Ա
Ազգանուն	Հովհաննիսյան
Հասցե	չկա

Մեղադրյալ

Անձ		
Անուն	Դանիել	
Ազգանուն	Ֆեռառուն	
Հայրանուն	Ֆլորին	
Հասցե	Մեծ Բրիտանիա, ք.Լոնդոն, Նյու Բառնեթ 56	
Սեռ	Արական	
Ծննդյան ամսաթիվ	16-04-1985	

Հոդված_1

Հոդված	177	Մաս 3	Կետ 1,2
--------	-----	-------	---------

Հոդված_1

Հոդված	190	Մաս 2	Կետ 1,2
Դատվածություն:	նախկինում չդատված		

Պաշտպան

Անուն	
-------	--

Ազգանուն	
Հասցե	
Վիճակագրական տողի համարը:	24,3
Իրեղեն ապացույց	
Իրեղեն ապացույցի անվանումը:	
Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:	
Խափանման միջոց:	Կալանավորում
Խափանման միջոց:	Կալանավորում
Երբ: 29-01-2009	
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Երևանի քրեական
Դատավորի անուն:	Ալեքսանդր Ռոբերտի Ազարյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Երևանի քրեական
Դատավորի անուն:	
Երբ: 04-02-2009	
Որոշումը ուղարկվել է կողմերին:	05-02-2009
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	05-02-2009
Այլ նշումներ:	
Երբ: 02-03-2009	
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր	
Անուն	Դանիել
Ազգանուն	Ֆլորին
Հայրանուն	Ֆեռառու
Հասցե	Մեծ Բրիտանյա, ք. Լոնդոն Նյու Բռնեթ փողոցի 56 տուն
Ծննդյան ամսաթիվ	16-04-1985
Դատավարության կողմեր	
Անուն	Օլիվեր
Ազգանուն	Ռադուկու
Հայրանուն	Մարիանը
Հասցե	Մեծ Բրիտանյա, ք. Լոնդոն , Ռիչարդսոն Բռնեթ փողոցի 200տուն
Ծննդյան ամսաթիվ	24-11-1979
Դատավարության կողմեր	
Անուն	«ՎՏԲ Հայաստան բանկ»

Ազգանուն	ՓԲԸ
Հասցե	Նալբանդյան 46
Ներկայացուցիչ	
Անուն	Միհրան
Ազգանուն	Խաչատրյան
Հայրանուն	Նորայրի
Հասցե	Սարյան 24՝ 41 բն.
Դատավարության կողմեր	
Անուն	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ»
Ազգանուն	ՓԲԸ
Հասցե	Բայրոնի 1
Ներկայացուցիչ	
Անուն	Ռաֆայել
Ազգանուն	Սարգսյան
Հայրանուն	Երվանդի
Հասցե	Կ.Ուլնեցու 3 փակ. 4շ. 36 բն
Դատավարության կողմեր	
Անուն	«Արցախբանկ»
Ազգանուն	ՓԲԸ
Հասցե	Կիեյան 3
Ներկայացուցիչ	
Անուն	Նաիրա
Ազգանուն	Մարգարյան
Հայրանուն	Մայիսի
Հասցե	Կոմիտաս 45/1շ 91 բն.
Դատավարության կողմեր	
Անուն	«Անելիք բանկ»
Ազգանուն	ՓԲԸ
Հասցե	Բաղրամյան 75
Ներկայացուցիչ	
Անուն	Անի
Ազգանուն	Մովսիսյան
Հայրանուն	Ռաֆայելի
Հասցե	Մաշտոցի 39/12շ 44 բն
Այլ նշումներ:	
Ժամ:	
Ամսաթիվ:	27-02-2009
Քրեկան դատավարության օրենսգրքի հոդված	
Հոդված	47
Դատարան:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Էջերի քանակ:	4հատոր
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	27-02-2009
Գրության համարը:	ԴԴ-13-0021/01/09

Որոշման բովանդակությունը:

Գործ N ԵՔՐԴ-0021/01/09

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՈՐԾՆ ԸՍՏ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 փետրվարի 2009թ. ք.Երևան

Երևանի քրեական դատարանի դատավոր Ա.Ազարյանս, ուսումնասիրելով Օլիվեր Ռադուկու Մարիանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Դանիել Ֆլորին Ֆեռառուի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով թիվ 58207208 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Ջ Ե Ց Ի

Օլիվեր Ռադուկու Մարիանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Դանիել Ֆլորին Ֆեռառուի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով քրեական գործը մուտք է եղել Երևանի քրեական դատարան և ընդունվել դատավոր Ա.Ազարյանի վարույթ:

Սույն քրեական գործով դատաքննությունը սկսված չէ: «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2009թ. փետրվարի 5-ի (թիվ ՀՕ-45-Ն) ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո քրեական դատարանների վարույթում գտնվող, սակայն դատաքննությունը չսկսված գործերը, տարածքային ընդդատությանը համապատասխան, փոխանցվում են առաջին ատյանի դատարան: Սույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում: Գործի նյութերից երևում է, որ սույն քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2009թ. փետրվարի 5-ի (թիվ ՀՕ-45-Ն) ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով և 21-րդ հոդվածի 3-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Օլիվեր Ռադուկու Մարիանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Դանիել Ֆլորին Ֆեռառուի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով թիվ 58207208 քրեական գործը փոխանցել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի ընդդատությանը:

Որոշման պատճենն ուղարկել սույն քրեական գործի մասնակիցներին:

Որոշումը բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ԱՋԱՐՅԱՆ

Դատական Գործ N: ԵՔԴԴ/0021/01/09

Ամսաթիվ:	05-03-2009
Երբ:	06-03-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	Գագիկ Նահապետի Ավետիսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	
Երբ:	09-03-2009
Որոշումը ուղարկվել է կողմերին:	13-03-2009
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	13-03-2009
Այլ նշումներ:	
Երբ:	30-03-2009
Երբ:	02-04-2009
Երբ:	10-04-2009
Դատավարության կողմեր:	Տուժողի իրավահաջորդ
Դատավարության կողմեր	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Այլ նշումներ:	
Ժամ:	12:30
Ամսաթիվ:	10-04-2009
Ամսաթիվ:	10-04-2009
Հոդված	
Հոդված	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360, 364-365,369-374,375,371
Այլ:	
Հիմնական:	Որոշակի ժամկետով ազատազրկում
Լրացուցիչ:	

Այլ:

Դատական ակտի
բովանդակությունը:

Գործ թիվ ԵՔՐԴ 0021/01/2008

ԴԱՏԱԿԾԻՈՒ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով.

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ՝ Գ. Ավետիսյան
ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Ս.Աբովյանի

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝
ՄԵՂԱԴՐՈՂ՝ Հ.Սարգսյանի
ՏՈՒԺՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Ն.Սարգսյանի

ՊԱՇՏՊԱՆ՝ Ա.Հովհաննիսյանի
ԹԱՐԳՄՆԻՉ՝ Հ.Ավագյանի

2009թ. ապրիլի 10-ին, դռնբաց դատական նիստում, դատարանում, քննեց քրեական գործն ըստ մեղադրանքի Օլիվեր Ռադուկու Մարիանի

ծնված 24.11.1979թ. Ռումինիայի Բաքաու քաղաքում, ազգությամբ ռումինացի, Ռումինիայի քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին մեկ անձ, նախկինում չդատված, աշխատել է Մեծ Բրիտանիայում գրանցված «Ռամեքս իմպորտ-էքսպորտ լիմիթեդ» ֆիրմայում որպես մենեջեր, բնակվել է Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքի Ռիչարդսոն փողոցի թիվ 200 տանը, Մեղադրվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

Առաջադրված մեղադրանքում Օլիվեր Ռադուկու Մարիանը իրեն մեղավոր ճանաչեց:

Դանիել Ֆլորին Ֆեռառուի
ծնված 16.04.1985թ. Ռումինիայի Բաքաու քաղաքում, ազգությամբ ռումինացի, Ռումինիայի քաղաքացի, մջջնակարգ կրթությամբ, ամուրի, խնամքին ոչ ոք, նախկինում չդատված, աշխատել է Մեծ Բրիտանիայում գրանցված «MCGEE քոնսթրաքշն» ֆիրմայում որպես բանվոր, բնակվել է Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքի Նյու Բառնեթ փողոցի թիվ 56 տանը, Մեղադրվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով: Առաջադրված մեղադրանքում Դանիել Ֆլորին Ֆեռատուն իրեն մեղավոր ճանաչեց:

Թիվ 58207208 քրեական գործը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է 2008թ. օգոստոսի 27-ին ՀՀ Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության կողմից:

Ամբաստանյալ Օլիվեր Ռադուկու Մարիանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. Օլիվեր Ռադուկու Մարիանը՝ բնակվելով Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում ներգրավվել է բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով բանկոմատներից գումարների հափշտակությամբ մասնագիտացած կազմակերպված խմբի գործունեությանը : 2008 թվականի օգոստոսին տեղեկանալով, որ Լոնդոնում բնակություն հաստատած համերկրացի՝ Ռումինիայի քաղաքացի Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն նպատակադրվել է հափշտակություններ իրականացնել Հայաստանի տարածքում, նա համաձայնվել է օժանդակել՝ հանցակիցների համար վարձակալել ավտոմեքենաներ, հյուրանոցային համարներ, մատուցել այլ ծառայություններ և Հայաստանից Մեծ Բրիտանիա անձամբ տեղափոխել գողոնը:

Ամբաստանյալ Օլիվեր Ռադուկու Մարիանը՝ 2008 թվականի օգոստոսի 20-ին Լոնդոն-Երևան չվերթով ժամանել է Հայաստան, ընդգրկվել Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից ղեկավարվող Ադի Իոան Բլազայից և Դանիել Ֆլորին Ֆեռառուից կազմված էթնիկական և համերկրացիական սկզբունքով կազմակերպված կայուն խմբի կազմում, ապա վերջինիս հետ բնակություն հաստատել Երևանի «Եվրոպա» հյուրանոցում:

Այնուհետև, հանցավոր խմբի կարիքների համար «Ինֆինիտի Թրավել» սահմանապակ պատասխանատվության ընկերությունից 2008 թվականի օգոստոսի 22-ին վարձակալել է «Նխսան Տիդա» մակնիշի ավտոմեքենա: Իրեն վերապահված դերաբաշխմամբ՝ Օլիվեր Ռադուկու Մարիանը համաձայնել է անմիջականորեն մասնակցել բանկոմատներից գումարներ հափշտակելուն և օժանդակել հանցակիցներին, ովքեր ՀՀ-ում գործող մի շարք բանկերի բանկոմատներից, կեղծ քարտերի օգտագործմամբ 2008թ. օգոստոսի 18-ից մինչև 27-ն ընկած ժամանակահատվածում գողացել են ընդհանուր առմամբ 34.047.000 ՀՀ դրամ՝ առանձնապես խոշոր չափերի գումար:

Այսպես, 2008 թվականի օգոստոսի 21-ին ամբաստանյալ Օլիվեր Ռադուկու Մարիանը «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Կիլյան թիվ 19 հասցեում տեղակայված բանկոմատից ժամը 13:21-ից մինչև 13:24-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4921817036916711, 4921816698112718, 6767014913935201 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել է ստանալ 470.000 ՀՀ դրամ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով, հափշտակել է ընդամենը 100.000 ՀՀ դրամ՝ 4921817036916711 համարի քարտի օգտագործմամբ, որի ընթացքում նրա հանցակիցը՝ Ադի Իոան Բլազան, վերահսկել է հարակից տարածքը:

2008 թվականի օգոստոսի 22-ին Օլիվեր Ռադուկու Մարիանը, Ադի Իոան Բլազան և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Աևան քաղաքում տեղակայված բանկոմատից ժամը 15:48-ից մինչև 15:58-ն ընկած ժամանակահատվածում, հաջորդաբար օգտագործելով 4547423009302213, 4547423009302213, 4567354018281699, 4921828820858654, 4543131169622825, 4658590779222006, 4921817036916711 և 4929404804275000 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել են ստանալ 750.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, սակայն կարողացել են հափշտակել ընդամենը 375.000 ՀՀ դրամ, որից Ադի Իոան Բլազան 100.000-ական ՀՀ դրամ ստացել է 4567354018281699 և 4921828820858654 համարների քարտերով, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն 4543131169622825 համարի քարտով՝ 150.000 ՀՀ դրամ, իսկ Օլիվեր Ռադուկու Մարիանը 4921817036916711 համարի քարտով՝ 25.000 ՀՀ դրամ :

Ամբաստանյալ Դանիել Ֆլորին Ֆեռառուին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի

2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. Դանիել Ֆլորին Ֆեռառուն՝ բնակվելով Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում, հետևելով ընկերոջ և համերկրացու՝ Օլիվեր Ռադուկու Մարիանի օրինակին, ներգրավվել է բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով բանկոմատներից գումարների հափշտակությամբ մասնագիտացած կազմակերպված խմբի գործունեությանը:

2008 թվականի օգոստոսին տեղեկանալով, որ Լոնդոնում բնակություն հաստատած Ռումինիայի քաղաքացի Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուի կողմից հավաքագրված անձինք՝ ծնունդով Ռումինիայի Բաքաու քաղաքից Օլիվեր Ռադուկու Մարիանը, Ադի Իոան Բլազան, Հայաստանում զբաղվում են կեղծ քարտերով բանկոմատներից գումարների հափշտակությամբ՝ 5 տոկոս բաժնեմասի դիմաց համաձայնել է Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուի օժանդակելու վերաբերյալ առաջարկությանը՝ ՀՀ դրամի տեսքով գողոնն արտարժույթով փոխարկելու հարցում: Օլիվեր Ռադուկու Մարիանի մոր՝ Լեոնորա Բրանկովեանուի տրամադրած միջոցներով գնելով Լոնդոն-Երևան չվերթի ավիատոմս և 2008 թվականի օգոստոսի 25-ին ժամանելով Հայաստան՝ Դանիել Ֆլորին Ֆեռառուն միացել է Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուի կողմից էթնիկական և համերկրացիական սկզբունքով կազմակերպված, Ադի Իոան Բլազայից և Օլիվեր Ռադուկու Մարիանից կազմված կայուն խմբին, ապա վերջինիս հետ բնակվել «Եվրոպա» հյուրանոցի միևնույն համարում:

Դանիել Ֆլորին Ֆեռառուն համաձայնել է մասնակցել բանկոմատներից գումարներ հափշտակելուն և այդ ընթացքում օժանդակել հանցակիցներին, ովքեր ՀՀ-ում գործող մի շարք բանկերի բանկոմատներից կեղծ քարտերի օգտագործմամբ 2008թ. օգոստոսի 18-ից մինչև 27-ն ընկած ժամանակահատվածում գողացել են ընդհանուր առմամբ 34.047.000 ՀՀ դրամ՝ առանձնապես խոշոր չափերի գումար:

Այսպես, 2008 թվականի օգոստոսի 25-ին Դանիել Ֆլորին Ֆեռառուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության Կիևյան թիվ 19 հասցեում տեղակայված բանկոմատից ժամը 02:27-ից մինչև 02:32-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 5434604173828215, 4921828426411882, 4493527031093733, 4539781649958023 և 4116320005649491 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել է ստանալ 531000 ՀՀ դրամ, սակայն իրենից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 181.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ընդ որում, 150.000 ՀՀ դրամն ստացել է 4493527031093733 համարի քարտով, իսկ 31.000 ՀՀ դրամը՝ 4116320005649491 համարի քարտով:

2008 թվականի օգոստոսի 25-ին Դանիել Ֆլորին Ֆեռառուն վերահսկել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում նրա հանցակիցը՝ Ադի Իոան Բլազան, ժամը 12:10-ից մինչև 12:19-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4462782064102136, 4462720158230025, 4539798468814034, 4539795163445072, 675940291251329006, 4543132389648426, 6767095412068389, 4659210180217003 և 4659210206379001 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել է ստանալ 650.000 ՀՀ դրամ, սակայն իրենից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 350.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ընդ որում, 100.000-ական ՀՀ դրամ ստացել է 4539798468814034 և 4543132389648426 համարների քարտերով և 150.000 ՀՀ դրամ՝ 4659210206379001 համարի քարտով:

Դանիել Ֆլորին Ֆեռառուն 2008 թվականի օգոստոսի 25-ին՝ ժամը 11:29-ին, Երևանի Մաշտոցի պողոտայում տեղակայված «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության բանկոմատից 4539781780864044 համարի բանկային քարտի կեղծ

կրկնօրինակով հափշտակել է 10.000 ՀՀ դրամ՝ Այնուհետև, 2008 թվականի օգոստոսի 25-ին վերահսկել է «Անելիք Բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում նրա հանցակիցը՝ Ադի Իրան Բլազան, ժամը 12Ք43-ից մինչև 12Ք50-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 6759686894011069, 4658591039780007, 4539794189245137, 4539795663592175, 4921818838653619, 4539795107268226, 4539791264470218, 4658590054965006 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, հափշտակել է ընդհանուր առմամբ 300.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ընդ որում, 150.000-ական ՀՀ դրամ ստացել է 4658591039780007 և 4539791264470218 համարների քարտերով՝

2008 թվականի օգոստոսի 25-ին վերահսկել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևանի Արգիշտի թիվ 7 հասցեում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում Ադի Իրան Բլազան 12Ք58-ից մինչև 12Ք59-ն ընկած ժամանակահատվածում 4539793794904203 և 4921818838653619 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 110.000 ՀՀ դրամ, ընդ որում, 100.000 ՀՀ դրամն ստացել է 4539793794904203 համարի քարտով և 10.000 ՀՀ դրամը՝ 4921818838653619 համարի քարտով՝

2008 թվականի օգոստոսի 26-ին վերահսկել է «Անելիք Բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում հանցակիցը՝ Ադի Իրան Բլազան, ժամը 12Ք24-ից մինչև 13Ք00-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4547425103666856, 4659020577492006, 4658591039780007, 4658590095868003, 4659210206379001, 4543132389648426, 4921818838653619, 4921817935084637, 4462619844501734, 4659210011140010, 4658590112583007, 6759674712752635, 4539798074224107, 4658590080678003, 4921827642680320, 4539795831386138, 4177270020151476, 675940477291714899, 4539796609591065, 4921817879760515 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, հափշտակել է ընդհանուր առմամբ 480.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ընդ որում, 150.000 ՀՀ դրամ ստացել է 4658591039780007 համարի քարտով, 100.000-ական ՀՀ դրամ 4543132389648426, 4462619844501734 համարների քարտերով, 50.000 ՀՀ դրամ՝ 4539798074224107 համարի քարտով, 40.000-ական ՀՀ դրամ՝ 4539795831386138 և 4539796609591065 համարների քարտերով՝

2008 թվականի օգոստոսի 26-ին վերահսկել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևանի Արգիշտի թիվ 7 հասցեում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում նրա հանցակիցը՝ Ադի Իրան Բլազան, ժամը 14Ք08-ից մինչև 14Ք14-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4658590112583007, 4658590095868003, 4921819794793217, 4659210206379001 և 4658590080678003 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել է ստանալ 201.000 ՀՀ դրամ, սակայն հափշտակել է ընդամենը 60.000 ՀՀ դրամ կանխիկ գումար՝ 20.000 ՀՀ դրամը՝ 4658590112583007 համարի բանկային քարտով, 40.000 ՀՀ դրամն էլ՝ 4658590095868003 համարի քարտով՝

2008 թվականի օգոստոսի 27-ին Ադի Իրան Բլազան և Դանիել Ֆլորին Ֆեռառուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության Երևանի Գ. Նժդեհի թիվ 8 հասցեում տեղակայված բանկոմատից ժամը 00Ք15-ից մինչև 00Ք45-ն ընկած ժամանակահատվածում, հաջորդաբար օգտագործելով 4659103125013118, 4921817090417317, 4659010861715022, 4462729220452525, 4543132624196322, 4462785124725077, 6759676149981737, 4917540161451132, 4917542163056356, 4917545311217226, 4547421202368908, 4921819401055513,

67594005000007986, 6759686411824739, 4921816758437815, 4539783272066021, 4539789261668164, 4658590904274005, 4539782987449019, 4659011029246025, 4462785388693151, 6759673235921719, 6304992260610611, 4917542469109701, 4659010994513039, 4917316264735238, 4917545388692756, 4658582258650005, 4539782257863030, 4539782331328174 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել են ստանալ 1.581.000 ՀՀ դրամ, սակայն, իրենց կամքից անկախ հանգամաքներով, հափշտակել են ընդամենը 426.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, որից 66.000 ՀՀ դրամը Ղանիել Ֆլորին Ֆեռառուն էլքագրել է 4543132624196322 համարի քարտով, 10.000-ական ՀՀ դրամ Ադի Իոան Բլագան էլքագրել է 4547421202368908 և 4921816758437815 համարների քարտերով, 145.000 ՀՀ դրամ՝ 4539782987449019 համարի քարտով, 25.000 ՀՀ դրամ՝ 4917316264735238 համարի քարտով և 170.000 ՀՀ դրամ՝ 4539782257863030 համարի քարտով: Ապա նույն օրը՝ ժամը 04:31-ից մինչև 04:37-ն ընկած ժամանակահատվածում, միասին նույն բանկոմատում հաջորդաբար օգտագործել են 4539793794904203, 4539798074224107, 4539795831386138, 4658590095868003, 4543132389648426, 4539796609591065, 4658591039780007 համարների կեղծ բանկային քարտերը և փորձել ստանալ 810.000 ՀՀ դրամ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով, Ղանիել Ֆեռառունին հաջողվել է հափշտակել ընդամենը 160.000 ՀՀ դրամ, ընդ որում, 60.000 ՀՀ դրամը էլքագրել է 4543132389648426 համարի քարտով և 100.000 ՀՀ դրամը՝ 4658591039780007 համարի քարտով:

2008 թվականի օգոստոսի 27-ին Ղանիել Ֆլորին Ֆեռառուն Երևանում տեղակայված «HSBS բանկ-Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության A842 բանկոմատից ժամը 4:15-ին 4543132624196322 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100000 ՀՀ դրամ:

2008 թվականի օգոստոսի 27-ին Ղանիել Ֆլորին Ֆեռառուն Երևանում տեղակայված «HSBS բանկ-Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության A843 բանկոմատից ժամը 0:08-ին 4543132624196322 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակի օգտագործմամբ հափշտակել է 100.000 ՀՀ դրամ:

Օժանդակելով հանցակիցներին և անմիջականորեն մասնակցելով գուղության դեպքերին՝ Ղանիել Ֆլորին Ֆեռառուն, տեղյակ լինելով ՀՀ դրամի տեսքով գումարի ծագման աղբյուրի հանցավոր բնույթի վերաբերյալ, ձեռնամուխ է եղել այն փոխարկելուն և այդ եղանակով հանցավոր ձանապարհով ստացված եկամուտներն

օրինականացնելուն: Այսպես, 2008 թվականի օգոստոսի 25-ին «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության Երևանի «Էրեբունի» մասնաճյուղում իր անձնագրային տվյալներով 2.074.600 ՀՀ դրամը փոխարկվել է 4.600 եվրոյի: Այնուհետև՝ 2008 թվականի օգոստոսի 26-ին, «Ամերիա բանկ» փակ բաժնետիրական

ընկերության Երևանի Վ.Սարգսյան թիվ 2 հասցում տեղակայված մասնաճյուղում 4.490.000 ՀՀ դրամը փոխարկվել է 10.000 եվրոյի: Մինչ դատաքննությունը սկսելը ամբաստանյալները Օլիվեր Ռադուկու Մարիանը և Ղանիել Ֆլորին Ֆեռառուն միջնորդեցին դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և դատարանում հայտարարեցին, որ գիտակցում են իրենց կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները,

միջնորդությունը ներկայացրել են կամավոր՝ խորհրդակցելով պաշտպանի հետ, գիտակցում են արագացված դատաքննությունն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքը իրենց պարզ ու հասկանալի է, համաձայն են իրենց առաջադրված մեղադրանքի հետ, առաջադրված մեղադրանքում իրենց մեղավոր են ճանաչում:

Համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3751-րդ և 3752-րդ հոդվածներով նախատեսված պայմանները՝ դատարանը որոշում է կայացրել արագացված

կարգով դատական քննություն անցկացնելու մասին:
Դատարանը, հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում ընկած ապացույցները, գտնում է, որ ամբաստանյալ Օլիվեր Ռադուկու Մարիանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված արարք: Իրեն վերապահված դերաբաշխմամբ՝ Օլիվեր Ռադուկու Մարիանը համաձայնել է անմիջականորեն մասնակցել բանկոմատներից գումարներ հափշտակելուն և օժանդակել հանցակիցներին, ովքեր ՀՀ-ում գործող մի շարք բանկերի բանկոմատներից, կեղծ քարտերի օգտագործմամբ 2008թ. օգոստոսի 18-ից մինչև 27-ն ընկած ժամանակահատվածում գողացել են ընդհանուր առմամբ 34.047.000 ՀՀ դրամ՝ առանձնապես խոշոր չափերի գումար՝ 2008 թվականի օգոստոսի 21-ին Օլիվեր Ռադուկու Մարիանը «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ բանկոմատից բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով, փորձել է ստանալ 470.000 ՀՀ դրամ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով, հափշտակել է ընդամենը 100.000 ՀՀ դրամ : 2008 թվականի օգոստոսի 22-ին Օլիվեր Ռադուկու Մարիանը և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ բանկոմատից բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով, փորձել են ստանալ 750.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, սակայն կարողացել են հափշտակել ընդամենը 375.000 ՀՀ դրամ, իսկ Օլիվեր Ռադուկու Մարիանը ստացել է 25.000 ՀՀ դրամ :

Դատարանը, հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում ընկած ապացույցները, գտնում է, որ ամբաստանյալ Դանիել Ֆլորին Ֆեռառուն կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված արարք:

Դանիել Ֆլորին Ֆեռառուն համաձայնվել է մասնակցել բանկոմատներից գումարներ հափշտակելուն և այդ ընթացքում օժանդակել հանցակիցներին, ովքեր ՀՀ-ում գործող մի շարք բանկերի բանկոմատներից կեղծ քարտերի օգտագործմամբ 2008թ. օգոստոսի 18-ից մինչև 27-ն ընկած ժամանակահատվածում գողացել են ընդհանուր առմամբ 34.047.000 ՀՀ դրամ՝ առանձնապես խոշոր չափերի գումար՝

2008 թվականի օգոստոսի 25-ին Դանիել Ֆլորին Ֆեռառուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության բանկոմատից օգտագործելով բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել է ստանալ 531000 ՀՀ դրամ, սակայն իրենից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 181.000 ՀՀ դրամ կանխիկ գումար՝

Նա 2008 թվականի օգոստոսի 25-ին վերահսկել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում նրա հանցակիցը՝ Ադի Իոան Բլագան բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով, փորձել է ստանալ 650.000 ՀՀ դրամ, սակայն իրենից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 350.000 ՀՀ դրամ կանխիկ գումար՝

Դանիել Ֆլորին Ֆեռառուն 2008 թվականի օգոստոսի 25-ին՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության բանկոմատից բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 10.000 ՀՀ դրամ՝

2008 թվականի օգոստոսի 25-ին վերահսկել է «Անելիք Բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում նրա հանցակիցը՝ Ադի Իոան Բլագան օգտագործելով բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, հափշտակել է ընդհանուր առմամբ 300.000 ՀՀ դրամ կանխիկ գումար՝

2008 թվականի օգոստոսի 25-ին վերահսկել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում Ադի Իոան Բլագան բանկային քարտերի

կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 110.000 ՀՀ դրամ՝

2008 թվականի օգոստոսի 26-ին վերահսկել է «Անելիք Բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում հանցակիցը՝ Ադի Իոան Բլազան բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, հափշտակել է ընդհանուր առմամբ 480.000 ՀՀ դրամ կանխիկ գումար՝

2008 թվականի օգոստոսի 26-ին վերահսկել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում նրա հանցակիցը՝ Ադի Իոան Բլազան օգտագործելով բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել է ստանալ 201.000 ՀՀ դրամ, սակայն հափշտակել է ընդամենը 60.000 ՀՀ դրամ կանխիկ գումար:

2008 թվականի օգոստոսի 27-ին Ադի Իոան Բլազան և Դանիել Ֆլորին Ֆեռառուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության բանկոմատից օգտագործելով բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել են ստանալ 1.581.000 ՀՀ դրամ, սակայն, իրենց կամքից անկախ հանգամաքներով, հափշտակել են ընդամենը 426.000 ՀՀ դրամ կանխիկ գումար : Այս նույն օրը՝ միասին նույն բանկոմատում օգտագործել են կեղծ բանկային քարտերը և փորձել ստանալ 810.000 ՀՀ դրամ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով, Դանիել Ֆեռառուն հաջողվել է հափշտակել ընդամենը 160.000 ՀՀ դրամ:

2008 թվականի օգոստոսի 27-ին նա Երևանում տեղակայված «HSBS բանկ-Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության A842 բանկոմատից բանկային քարտի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է 200000 ՀՀ դրամ՝

Օժանդակելով հանցակիցներին և անմիջականորեն մասնակցելով գողության դեպքերին՝ Դանիել Ֆլորին Ֆեռառուն, տեղյակ լինելով ՀՀ դրամի տեսքով գումարի ծագման աղբյուրի հանցավոր բնույթի վերաբերյալ, ձեռնամուխ է եղել այն փոխարկելուն և այդ եղանակով հանցավոր ձանապարհով ստացված եկամուտներն

օրինականացնելուն: Այդ նպատակով 2008 թվականի օգոստոսի 25-ին «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության Երևանի «Էրեբունի» մասնաձյուղում իր անձնագրային տվյալներով 2.074.600 ՀՀ դրամը փոխարկվել է 4.600 եվրոյի: Այնուհետև՝ 2008 թվականի օգոստոսի 26-ին, «Ամերիա բանկ» փակ բաժնետիրական ընկերության Երևանի Վ.Սարգսյան թիվ 2 հասցում տեղակայված մասնաձյուղում 4.490.000 ՀՀ դրամը փոխարկվել է 10.000 եվրոյի:

Ղատարանը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք դիտում է այն, որ ամբաստանյալներ Օլիվեր Ռադուկու Մարիանը և Դանիել Ֆլորին Ֆեռառուն նախկինում դատված չեն, ընդունում են կատարած հանցանքը և զղձում դրա համար: Օլիվեր Ռադուկու Մարիանի խնամքին է գտնվում մեկ երեխա :

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Կատարած արարքի համար ամբաստանյալներ Օլիվեր Ռադուկու Մարիանը և Դանիել Ֆլորին ենթակա են պատժի՝ ազատազրկման ձևով:

Օլիվեր Ռադուկու Մարիանի նկատմամբ պատիժ սահմանելով դատարանը հաշվի է առնում նրա ոչ ակտիվ հանցավոր դերը, հանցանքը կատարելուց հետո նրա վարքագիծը՝ որ ակտիվորեն օժանդակել է հանցագործության և դրա մասնակիցների բացահայտմանը, ակտիվորեն համագործակցել է նախաքննական մարմնի հետ : Վերոհիշյալը դատարանը դիտում է որպես բացառիկ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են կատարված հանցանքի մեջ հանրության համար վտանգավորության աստիճանը, նաև այն, որ հանդիսանալով խմբակային հանցագործության մասնակից ակտիվորեն աջակցել է խմբի կատարած հանցանքը բացահայտելուն : Նման պայմաններում դատարանը գտավ, որ Օլիվեր Ռադուկու Մարիանի նկատմամբ պետք է սահմանել

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի մեղմ պատիժ: Ղատարանը գտավ, որ անբաստանյալներ Օլիվեր Ռադուկու Մարիանի և Ղանիել Ֆլորին Ֆեռառուի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը պետք է թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ Ազգային անվտանգության քննչական վարչությունում պահվող իրեղեն ապացույց ձանաչված փաստաթղթերը, կեղծ բանկային քարտերը պետք է թողնել քրեական գործում: Իսկ 25 200/քսանհինգ հազար երկու հարյուր/ եվրոն և 4 040 000 /չորս միլիոն քառասուն հազար/ ՀՀ դրամ գումարը տնօրինելու հարցը պետք է թողնել լուծելու քաղաքացիական դատավարության կարգով՝ տուժողների պահանջները բավարարելու նպատակով:

Քաղաքացիական հայցը թողնել առանց քննության: Տուժողներին, քաղաքացիական հայցվորներին պետք է իրավունք վերապահել քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական հայց ներկայացնել դատարան:

Դեկավարվելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 357-360-րդ, 364-365-րդ, 369-374-րդ, 3753-րդ հոդվածներով՝ և 3711-րդ հոդվածի 6-րդ մասով ղատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Անբաստանյալ Օլիվեր Ռադուկու Մարիանին մեղավոր ձանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտել ազատազրկման երկու տարի ժամանակով՝ առանց գույքի բռնագրավման:

Անբաստանյալ Օլիվեր Ռադուկու Մարիանը պատիժը կրելու է ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Անբաստանյալ Օլիվեր Ռադուկու Մարիանի պատիժը կրելու սկիզբը հաշվել 2008թ. օգոստոսի 27-ից, նրան կալանքի վերցնելու օրվանից:

Անբաստանյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուին մեղավոր ձանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

Ղանիել Ֆլորին Ֆեռառուին դատապարտել՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ազատազրկման չորս տարի վեց ամիս ժամանակով՝ առանց գույքի բռնագրավման, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով՝ ազատազրկման չորս տարի ժամանակով՝ ամբողջ գույքի բռնագրավումով, որը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի և հանցավոր ձանաչարհով ձեռք բերված օգուտի չափը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիմունքներով նշանակված պատիժները մասնակի գումարելով Ղանիել Ֆլորին Ֆեռառուի նկատմամբ վերջնական պատիժ սահմանել ազատազրկում վեց տարի ժամանակով՝ ամբողջ գույքի բռնագրավումով, որը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի և հանցավոր ձանաչարհով ձեռք բերված օգուտի չափը:

Անբաստանյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուն պատիժը կրելու է ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Անբաստանյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուի պատիժը կրելու սկիզբը հաշվել 2008թ. օգոստոսի 28-ից, նրան կալանքի վերցնելու օրվանից:

Անբաստանյալներ Օլիվեր Ռադուկու Մարիանի և Ղանիել Ֆլորին Ֆեռառուի նկատմամբ ընտրված խափանման միջոցը

	<p>կալանավորումը թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:</p> <p>ՀՀ Ազգային անվտանգության քննչական վարչությունում պահվող իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերը, կեղծ բանկային քարտերը թողնել քրեական գործում: Իսկ 25 200/քսանհինգ հազար երկու հարյուր/ եվրոն և 4 040 000 /չորս միլիոն քառասուն հազար/ ՀՀ դրամ գումարը տնօրինելու հարցը թողնել լուծելու քաղաքացիական դատավարության կարգով՝ տուժողներին պատճառված վնասի հատուցման հարցը լուծելու համար: Քաղաքացիական հայցը թողնել առանց քննության: Տուժողներին, քաղաքացիական հայցվորներին իրավունք վերապահել քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական հայց ներկայացնել դատարան:</p> <p>Դատավճիռը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան հրապարակվելու օրվանից հետո մեկամսյա ժամկետում՝ բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքի:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. Ավետիսյան</p>
<p>Գործը հանձնվել է գրասենյակ:</p> <p>Էջերի քանակ:</p> <p>Գործին կից նյութերը:</p> <p>Գործն ուղարկվել է:</p> <p>Ուր:</p> <p>Գրության համարը:</p> <p>Գործը ստացվել է:</p> <p>Ներկայացվել է դիմում միջնորդություն:</p>	<p>08-05-2009</p> <p>253, 279, 262, 281, 152</p> <p></p> <p>11-05-2009</p> <p>Վերաքննիչ քրեական դատարան</p> <p>Ե-7790</p> <p></p> <p></p>
<p>Ամսաթիվ:</p>	<p>11-05-2009</p>
<p>Ամսաթիվ:</p>	<p>10-09-2009</p>
<p>Ամսաթիվ:</p>	<p>11-09-2009</p>
<p>Գործը հանձնվել է գրասենյակ:</p> <p>Էջերի քանակ:</p> <p>Գործին կից նյութերը:</p> <p>Գործն ուղարկվել է:</p> <p>Ուր:</p> <p>Գրության համարը:</p> <p>Գործը ստացվել է:</p>	<p>29-09-2009</p> <p>253, 279, 262, 281, 279</p> <p></p> <p></p> <p></p> <p></p> <p></p> <p></p>
<p>Ամսաթիվ:</p>	<p>30-09-2011</p>
<p>Ուր է ուղարկվել:</p> <p>Այլ նշումներ:</p>	<p>ՀՀ Դատական Դեպարտամենտ</p> <p></p>

Դատական Գործ N: ԵՔԲԴ/0021/01/09

Ամսաթիվ:	28-04-2009		
Ամբաստանյալ Անձ			
Անուն	Դանիել		
Ազգանուն	Ֆեռառու		
Հասցե	չկա		
Հոդված_1			
Հոդված	177	Մաս 3	Կետ 1,2
Ղատվածություն:			
Պաշտպան			
Անուն	Անուշ		
Ազգանուն	Հովհաննիսյան		
Հասցե	չկա		
Պատիժ:	ՀՀ քր օր 177h 3մ 1կ-ճտարի:		
Հոդված_2			
Հոդված			
Խախտման միջոց:	Կալանավորում		
Ում կողմից է բերվել բողոքը:	Պաշտպան		
Բողոքը բերող անձը			
Անուն			
Ազգանուն			
Հասցե			
Բողոքի բովանդակությունը:	Դանիել Ֆեռառու մյուսը՝ Օլիվեր Մարիանի Օլիվեր Ռադուկու Մարիանի Փոփոխել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ Դանիել Ֆլորին Ֆեռառուի /ՀՀ քր. օր-ի 177հոդ. 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 190 հոդ. 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով , ՀՀ քր.օր. 66 հոդ. կարգով վերջնական պատիժ - 6 տարի ազ./ վերաբերյալ 10.04.2009թ. դատավճիռը և ՀՀ քր.օր. 64 հոդ. կիրառմամբ նշանակել սահմանված նվազագույն պատժից ավելի մեղմ պատիժ :		
Բողոքի ստացման կարգը:	Առձեռն հանձնվել է գրասենյակ		
Ամսաթիվ:	28-04-2009		
Չափահաս:	Այո		
Ամսաթիվ: 12-05-2009			
Նախագահող դատավոր			
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.		
Դատավորի անուն:	Հենրիկ Գաղիշի Տեր-Աղամյան		
Դատավոր			
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.		
Դատավորի անուն:			

Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	14-05-2009
Ամսաթիվ:	14-05-2009
Կից փաստաթղթեր և իրեղեն ապացույց:	Կից փաստաթղթեր և իրեղեն ապացույցներ չկան:
Երբ:	25-05-2009
Ուղարկվել է ծանուցագիր:	14-05-2009
Ժամ:	12.00
Այլ նշումներ:	
Անփոփոխ թողնված դատական ակտը:	Պատճառաբանվել է
Ամսաթիվ:	16-06-2009
Ամբաստանյալ	
Անուն	Դանիել
Ազգանուն	Ֆլորին
Հայրանուն	Ֆեռառու
Հասցե	Մեծ Բրիտանիա. քաղաք Լոնդոն, Նյու Բառնեթ փողոց, տուն 56
Սեռ	Իգական
Քր. դատ. օր. հոդված	
Հոդված	393, 394, 402
Քր. դատ. օր. հոդված	
Հոդված	393, 394, 402
Այլ նշումներ:	
Քր.օր. հոդված	
Հոդված	177-րդ Մաս 3-րդ Կետ 1-ին, 2-րդ
Դատական ակտ:	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների Քրեական գործ ԵՔՐԴ/0021/01/09 ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռ կայացրած դատարանի կազմը նախագահող դատավոր Գ.Ավետիսյան</p> <p>Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 16 հունիսի 2009 թվական ք.Երևան</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ/ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝ նախագահող դատավոր՝ Հ.ՏԵՐ-ԱՂԱՄՅԱՆ</p>

դատավորներ՝ Ռ.ԱԶԱՐՅԱՆ
Ժ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
քարտուղարությամբ՝ Ա.ՓԱՇԻԿՅԱՆԻ
Ն.ՊՈՂՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
մեղադրող՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻ
պաշտպան՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
թարգման՝ Հ.ԱՎԱԳՅԱՆԻ

դռնբաց դատական նիստում ամբաստանյալի պաշտպան Անուշ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա, վերաքննության կարգով, քննության առնելով քրեական գործն ըստ մեղադրանքի Դանիել Ֆլորին Ֆեռառուի՝ ծնված 1985 թվականի ապրիլի 16-ին Ռումինիայի Բաբաու քաղաքում, ազգությամբ՝ ռումին, Ռումինիայի քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, չամուսնացած, խնամքին՝ ոչ-ոք, նախկինում չդատված, աշխատել է Մեծ Բրիտանիայում գրանցված <<MCGEE քոնսթրաքշն>> ֆիրմայում որպես բանվոր, բնակվել է Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքի Նյու Բառնեթ փողոցի 56 տանը:

Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված հանցանքների կատարման համար, և վերանայելով դատական ակտը,

Պ Ա Ր Զ Ե Ց
ԳՈՐԾԻ ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՀ ԱԱԾ քննչական վարչության ավագ քննիչ Ա.Գրիգորյանի 2008 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ Կոնստանտին Հաջիի և Մարգարիտա Սպրուդանեի կողմից նախնական համաձայնությամբ կատարված գողության դեպքով հարուցվել է թիվ 58207208 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2. 2008 թվականի օգոստոսի 28-ին Դանիել Ֆլորին Ֆեռառուն ձերբակալվել է:

3. Նախաքննական մարմնի 2008 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ Դանիել Ֆլորին Ֆեռառուն ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

4. 30.08.2008թ. քննիչ Ա.Գրիգորյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ թիվ 58207208 քրեական գործով մեղադրյալ Դանիել Ֆլորին Ֆեռառուի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց 2 /երկու/ ամիս ժամանակով ընտրելու մասին, որը դատարանի նույն օրվա որոշմամբ բավարարվել է:

5. Նախաքննական մարմինը 2008 թվականի հոկտեմբերի 18-ին միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ թիվ 58207208 քրեական գործով մեղադրյալ Դանիել Ֆլորին Ֆեռառուին կալանքի տակ պահելու ժամկետը 2 /երկու/ ամիս ժամանակով երկարացնելու վերաբերյալ, որը դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ բավարարվել է:

6. Նախաքննական մարմինը 2008 թվականի դեկտեմբերի 18-ին միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ թիվ 58207208 քրեական գործով մեղադրյալ Դանիել Ֆլորին Ֆեռառուին կալանքի

տակ պահելու ժամկետը 1 /մեկ/ ամիս ժամանակով երկարացնելու վերաբերյալ, որը դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ բավարարվել է:

7. 2008 թվականի դեկտեմբերի 26-ին թիվ 58207208 քրեական գործով մեղադրյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է ու նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

8. 2009 թվականի հունվարի 26-ին թիվ 58207208 քրեական գործն ըստ մեղադրանքի Ղանիել Ֆլորին Ֆեռառուի` ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, Օլիվեր Ռադուկու Մարիանիի` ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

9. Երևանի քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ թիվ 58207208 քրեական գործն ըստ մեղադրանքի Ղանիել Ֆլորին Ֆեռառուի` ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, Օլիվեր Ռադուկու Մարիանիի` ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, փոխանցվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ` առաջին ատյանի դատարան/ ընդդատությանը:

10. Առաջին ատյանի դատարանի դատավոր Գ.Ավետիսյանը 2009 թվականի մարտի 09-ի որոշմամբ քրեական գործն ըստ մեղադրանքի Ղանիել Ֆլորին Ֆեռառուի` ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, Օլիվեր Ռադուկու Մարիանիի` ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, ընդունել է վարույթ, իսկ 2009 թվականի մարտի 23-ի որոշմամբ գործի քննությունը նշանակել է 2009 թվականի մարտի 30-ին, ժամը 12.30-ին, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում, դատական նիստերի թիվ 2 դահլիճում, դռնբաց դատական նիստում, դատավոր Գ.Ավետիսյանի նախագահությամբ, դատական նիստերի քարտուղար Ք.Բադալյանի քարտուղարությամբ: Մեղադրյալների նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ:

11. Առաջին ատյանի դատարանի 10.04.2009թ. դատավճռով ամբաստանյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուն մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և դատապարտվել`

1. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով` ազատազրկման չորս տարի վեց ամիս ժամանակով` առանց գույքի բռնագրավման,

2. ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով` ազատազրկման չորս տարի ժամանակով` ամբողջ գույքի բռնագրավումով, որը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիմունքներով նշանակված պատիժները մասնակի գումարելով Ղանիել Ֆլորին Ֆեռառուի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում վեց տարի ժամանակով` ամբողջ գույքի բռնագրավումով, որը չի կարող

զերազանցել հանցագործությամբ հասցված վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը:

Ամբաստանյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուն պատիժը կրելու է ՀՀ Արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Ամբաստանյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուի պատիժը կրելու սկիզբը հաշվվել է 2008 թվականի օգոստոսի 28-ից, նրան կալանքի վերցնելու օրվանից:

Ղատավճռով Ղանիել Ֆլորին Ֆեռառուի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ղատավճռով որոշվել է ՀՀ ազգային անվտանգության քննչական վարչությունում պահվող իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերը, կեղծ բանկային քարտերը թողնել քրեական գործում, իսկ 25 200 /քսանհինգ հազար երկու հարյուր/ եվրոն և 4 040 000 /չորս միլիոն քառասուն հազար/ ՀՀ դրամ գումարը տնօրինելու հարցը թողնել լուծելու քաղաքացիական դատավարության կարգով՝ տուժողներին պատճառված վնասի հատուցման հարցը լուծելու համար:

Քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության:

Տուժողներին, քաղաքացիական հայցվորներին իրավունք է վերապահվել քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական հայցը ներկայացնելու դատարան:

12. Առաջին ատյանի դատարանի 10.04.2009թ. դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով մեղավոր է ճանաչվել նաև ամբաստանյալ Օլիվեր Ռադուկու Մարիանին և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

13. Ամբաստանյալ Օլիվեր Ռադուկու Մարիանին դատավճիռը չի բողոքարկել:

14. Առաջին ատյանի դատարանի 10.04.2009թ. դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Ղանիել Ֆեռառուի պաշտպան Անուշ Հովհաննիսյանը:

15. Վերաքննիչ բողոքի կապակցությամբ գրավոր պատասխան չի ներկայացվել:

16. Վերաքննիչ դատարանն իր 2009 թվականի մայիսի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և քրեական գործն ըստ մեղադրանքի Ղանիել Ֆլորին Ֆեռառուի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, նշանակել է վերաքննիչ դատարանի դռնբաց դատական նիստում քննության 2009 թվականի մայիսի 25-ին, ժամը՝ 12.00-ին, Երևան քաղաքում:

17. Նկատի ունենալով, որ դատական նիստի օրվա և ժամի մասին պատշաճ կերպով իրազակվել են տուժողի ներկայացուցիչներ Մ.Խաչատրյանը, Ն.Մարգարյանը, Ա.Մովսիսյանը և Ռ.Մարգարյանը, բայց չեն ներկայացել դատական նիստին, գործի քննությունը կատարվել է նրանց բացակայությամբ:

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

18. Ղանիել Ֆեռառուն՝ բնակվելով Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում, հետևելով ընկերոջ և համերկրացու՝ Օլիվեր Ռադուկու Մարիանի օրինակին, ներգրավվել է բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով բանկոմատներից գումարների հափշտակությամբ մասնագիտացած կազմակերպված խմբի

գործունեությանը:

2008 թվականի օգոստոսին տեղեկանալով, որ Լոնդոնում բնակություն հաստատած Ռումինիայի քաղաքացի Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուի կողմից հավաքագրված անձինք՝ ծնունդով Ռումինիայի Բաքաու քաղաքից Օլիվեր Ռադուկու Մարիանը, Ադի Իոան Բլագան, Հայաստանում զբաղվում են կեղծ քարտերով բանկոմատներից գումարների հափշտակությամբ՝ 5 տոկոս բաժնեմասի դիմաց համաձայնել է Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուի օժանդակելու վերաբերյալ առաջարկությանը՝ ՀՀ դրամի տեսքով գողոնն արտարժույթով փոխարկելու հարցում: Օլիվեր Ռադուկու Մարիանի մոր՝ Լեոնորա Բրանկովեանուի տրամադրած միջոցներով գնելով Լոնդոն-Երևան չվերթի ավիատոմս և 2008 թվականի օգոստոսի 25-ին ժամանելով Հայաստան՝ Դանիել Ֆլորին Ֆեռառուն միացել է Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուի կողմից էթնիկական և համերկրացիական սկզբունքով կազմակերպված, Ադի Իոան Բլագայից և Օլիվեր Ռադուկու Մարիանից կազմված կայուն խմբին, ապա վերջինիս հետ բնակվել <<Եվրոպա>> հյուրանոցի միևնույն համարում:

Դանիել Ֆլորին Ֆեռառուն համաձայնել է մասնակցել բանկոմատներից գումարներ հափշտակելուն և այդ ընթացքում օժանդակել հանցակիցներին, ովքեր ՀՀ-ում գործող մի շարք բանկերի բանկոմատներից կեղծ քարտերի օգտագործմամբ 2008թ. օգոստոսի 18-ից մինչև 27-ն ընկած ժամանակահատվածում գողացել են ընդհանուր առմամբ 34.047.000 ՀՀ դրամ՝ առանձնապես խոշոր չափերի գումար:

Այսպես, 2008 թվականի օգոստոսի 25-ին Դանիել Ֆլորին Ֆեռառուն <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> փակ բաժնետիրական ընկերության Կիլյան թիվ 19 հասցեում տեղակայված բանկոմատից ժամը 02:27-ից մինչև 02:32-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 5434604173828215, 4921828426411882, 4493527031093733, 4539781649958023 և 4116320005649491 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել է ստանալ 531000 ՀՀ դրամ, սակայն իրենից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 181.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ընդ որում, 150.000 ՀՀ դրամն ստացել է 4493527031093733 համարի քարտով, իսկ 31.000 ՀՀ դրամը՝ 4116320005649491 համարի քարտով:

2008 թվականի օգոստոսի 25-ին Դանիել Ֆլորին Ֆեռառուն վերահսկել է <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> փակ բաժնետիրական ընկերության՝ Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում նրա հանցակիցը՝ Ադի Իոան Բլագան, ժամը 12:10-ից մինչև 12:19-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4462782064102136, 4462720158230025, 4539798468814034, 4539795163445072, 675940291251329006, 4543132389648426, 6767095412068389, 4659210180217003 և 4659210206379001 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել է ստանալ 650.000 ՀՀ դրամ, սակայն իրենից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 350.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ընդ որում, 100.000-ական ՀՀ դրամ ստացել է 4539798468814034 և 4543132389648426 համարների քարտերով և 150.000 ՀՀ դրամ՝ 4659210206379001 համարի քարտով:

Դանիել Ֆլորին Ֆեռառուն 2008 թվականի օգոստոսի 25-ին՝ ժամը 11:29-ին, Երևանի Մաշտոցի պողոտայում տեղակայված <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> փակ բաժնետիրական ընկերության բանկոմատից 4539781780864044 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 10.000 ՀՀ դրամ:

Այնուհետև, 2008 թվականի օգոստոսի 25-ին վերահսկել է <<Անելիք Բանկ>> փակ բաժնետիրական ընկերության՝ Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում նրա հանցակիցը՝ Ադի Իոան Բլագան, ժամը 12:43-ից մինչև 12:50-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով

6759686894011069, 4658591039780007, 4539794189245137, 4539795663592175, 4921818838653619, 4539795107268226, 4539791264470218, 4658590054965006 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, հափշտակել է ընդհանուր առմամբ 300.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ընդ որում, 150.000-ական ՀՀ դրամ ստացել է 4658591039780007 և 4539791264470218 համարների քարտերով:

2008 թվականի օգոստոսի 25-ին վերահսկել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևանի Արգիշտի թիվ 7 հասցեում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում Ադի Իոան Բլազան 12:58-ից մինչև 12:59-ն ընկած ժամանակահատվածում 4539793794904203 և 4921818838653619 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 110.000 ՀՀ դրամ, ընդ որում, 100.000 ՀՀ դրամն ստացել է 4539793794904203 համարի քարտով և 10.000 ՀՀ դրամը՝ 4921818838653619 համարի քարտով:

2008 թվականի օգոստոսի 26-ին վերահսկել է «Անելիք Բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում հանցակիցը՝ Ադի Իոան Բլազան, ժամը 12:24-ից մինչև 13:00-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով

4547425103666856, 4659020577492006, 4658591039780007, 4658590095868003, 4659210206379001, 4543132389648426, 4921818838653619, 4921817935084637, 4462619844501734, 4659210011140010, 4658590112583007, 6759674712752635, 4539798074224107, 4658590080678003, 4921827642680320, 4539795831386138, 4177270020151476, 675940477291714899, 4539796609591065, 4921817879760515 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, հափշտակել է ընդհանուր առմամբ 480.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ընդ որում, 150.000 ՀՀ դրամ ստացել է 4658591039780007 համարի քարտով, 100.000-ական ՀՀ դրամ 4543132389648426, 4462619844501734 համարների քարտերով, 50.000 ՀՀ դրամ՝ 4539798074224107 համարի քարտով, 40.000-ական ՀՀ դրամ՝ 4539795831386138 և 4539796609591065 համարների քարտերով:

2008 թվականի օգոստոսի 26-ին վերահսկել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևանի Արգիշտի թիվ 7 հասցեում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, որի ընթացքում նրա հանցակիցը՝ Ադի Իոան Բլազան, ժամը 14:08-ից մինչև 14:14-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4658590112583007, 4658590095868003, 4921819794793217, 4659210206379001 և 4658590080678003 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել է ստանալ 201.000 ՀՀ դրամ, սակայն հափշտակել է ընդամենը 60.000 ՀՀ դրամ կանխիկ գումար՝ 20.000 ՀՀ դրամը՝ 4658590112583007 համարի բանկային քարտով, 40.000 ՀՀ դրամն էլ՝ 4658590095868003 համարի քարտով:

2008 թվականի օգոստոսի 27-ին Ադի Իոան Բլազան և Դանիել Ֆլորին Ֆեռառուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության Երևանի Գ. Նժդեհի թիվ 8 հասցեում տեղակայված բանկոմատից ժամը 00:15-ից մինչև 00:45-ն ընկած ժամանակահատվածում, հաջորդաբար օգտագործելով

4659103125013118, 4921817090417317, 4659010861715022, 4462729220452525, 4543132624196322, 4462785124725077, 6759676149981737, 4917540161451132, 4917542163056356, 4917545311217226, 4547421202368908, 4921819401055513, 675940050000007986, 6759686411824739, 4921816758437815, 4539783272066021, 4539789261668164, 4658590904274005, 4539782987449019, 4659011029246025, 4462785388693151, 6759673235921719, 6304992260610611, 4917542469109701, 4659010994513039, 4917316264735238, 4917545388692756, 4658582258650005, 4539782257863030, 4539782331328174

համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել են ստանալ 1.581.000 ՀՀ դրամ, սակայն, իրենց կամքից անկախ հանգամանքներով, հափշտակել են ընդամենը 426.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, որից 66.000 ՀՀ դրամը Ղանիել Ֆլորին Ֆեռառուն ելքագրել է 4543132624196322 համարի քարտով, 10.000-ական ՀՀ դրամ Ադի Իոան Բլազան ելքագրել է 4547421202368908 և 4921816758437815 համարների քարտերով, 145.000 ՀՀ դրամ՝ 4539782987449019 համարի քարտով, 25.000 ՀՀ դրամ՝ 4917316264735238 համարի քարտով և 170.000 ՀՀ դրամ՝ 4539782257863030 համարի քարտով: Ապա նույն օրը՝ ժամը 04:31-ից մինչև 04:37-ն ընկած ժամանակահատվածում, միասին նույն բանկումատում հաջորդաբար օգտագործել են 4539793794904203, 4539798074224107, 4539795831386138, 4658590095868003, 4543132389648426, 4539796609591065, 4658591039780007 համարների կեղծ բանկային քարտերը և փորձել ստանալ 810.000 ՀՀ դրամ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով, Ղանիել Ֆեռառունին հաջողվել է հափշտակել ընդամենը 160.000 ՀՀ դրամ, ընդ որում, 60.000 ՀՀ դրամը ելքագրել է 4543132389648426 համարի քարտով և 100.000 ՀՀ դրամը՝ 4658591039780007 համարի քարտով:

2008 թվականի օգոստոսի 27-ին Ղանիել Ֆլորին Ֆեռառուն Երևանում տեղակայված «HSBS բանկ-Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության A842 բանկումատից ժամը 4:15-ին 4543132624196322 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100000 ՀՀ դրամ:

2008 թվականի օգոստոսի 27-ին Ղանիել Ֆլորին Ֆեռառուն Երևանում տեղակայված «HSBS բանկ-Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության A843 բանկումատից ժամը 00:08-ին 4543132624196322 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակի օգտագործմամբ հափշտակել է 100.000 ՀՀ դրամ:

Օժանդակելով հանցակիցներին և անմիջականորեն մասնակցելով գողության դեպքերին՝ Ղանիել Ֆլորին Ֆեռառուն, տեղյակ լինելով ՀՀ դրամի տեսքով գումարի ծագման աղբյուրի հանցավոր բնույթի վերաբերյալ, ձեռնամուխ է եղել այն փոխարկելուն և այդ եղանակով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն

օրինականացնելուն: Այսպես, 2008 թվականի օգոստոսի 25-ին «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության Երևանի «Էրեբունի» մասնաձյուղում իր անձնագրային տվյալներով 2.074.600 ՀՀ դրամը փոխարկվել է 4.600 եվրոյի: Այնուհետև՝ 2008 թվականի օգոստոսի 26-ին, «Ամերիա բանկ» փակ բաժնետիրական ընկերության Երևանի Վ.Սարգսյան թիվ 2 հասցում տեղակայված մասնաձյուղում 4.490.000 ՀՀ դրամը փոխարկվել է 10.000 եվրոյի:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԻ ՀԻՄՔԵՐԸ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՁԸ

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

19. Ըստ բողոքի հեղինակի դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի էական խախտումներ, որոնք էլ հիմք են հանդիսացել անհիմն և խիստ դատավճիռ կայացնելուն:

Մասնավորապես, դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ամբաստանյալ Ղ.Ֆեռառուն երիտասարդ է, ամուսնացած, խնամքին է ծեր մայրը, ընդունել է մեղքը, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ և աջակցել է հանցագործության բացահայտմանը:

Փաստորեն, դատարանն անտեսել է քրեական գործով ձեռք բերված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ամբաստանյալ Ղ.Ֆեռառունի անձը բնութագրող հանգամանքները և պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում նրա նկատմամբ նշանակել է

ակնհայտ խիստ պատիժ:

Պաշտպանը խնդրում է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ ամբաստանյալ Ղանիել Ֆեռառուի նկատմամբ նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կամ մեղմացնել նշանակված պատժաչափը:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄԸ:

21. Վերաքննիչ դատարանում, դատաքննության ընթացքում պաշտպանության կողմն ամբողջությամբ պնդեց վերաքննիչ բողոքում բերված փաստարկները և խնդրեց՝ առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի դատավճիռը՝ Ղանիել Ֆլորին Ֆեռառուի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նշանակված պատժի մասով, փոփոխել, ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ Ղ.Ֆեռառուի նկատմամբ նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, իսկ եթե դատարանը նպատակահարմար չի գտնի ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառումը, ապա ամբաստանյալ Ղ.Ֆեռառուի նկատմամբ նշանակել առաջին ատյանի դատարանի դատավճիռով նշանակված պատժից ավելի մեղմ պատիժ:

22. Մեղադրողն իր պատասխանում առարկեց վերաքննիչ բողոքի դեմ և, ներկայացնելով իր հիմնավորումներն ու փաստարկները, խնդրեց՝ պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքը մերժել և առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ:

23. Վերաքննիչ դատարանը, քննության առնելով վերաքննիչ բողոքը՝ բողոքի հիմքերի և փաստարկների սահմաններում, լսելով նաև բողոքում ներկայացված հետևությունները հիմնավորելու մասին պաշտպանական կողմի ելույթը, դատական ակտը չբողոքարկած հակառակ կողմի՝ մեղադրողի, պատասխանը, հանգում է այն հետևության, որ վերաքննիչ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառում

24. Առաջին ատյանի դատարանում, մինչև դատաքննությունը սկսելը, ամբաստանյալը միջնորդել է դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտնել, որ գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատաքննությունն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է և հասկանալի, համաձայն է իրեն առաջադրված մեղադրանքի հետ, առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում:

25. Առաջին ատյանի դատարանը համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3751-րդ և 3752-րդ հոդվածներով նախատեսված պայմանները, որոշում է կայացրել արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին:

26. Առաջին ատյանի դատարանը հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, հանգել է այն հետևության, որ ամբաստանյալ Ղանիել Ֆեռառուն կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված արարք:

27. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան ազատազրկման ձևով պատիժ է նախատեսում չորսից ութ տարի ժամկետով:

28. Ղատավճռով Ղանիել Ֆեռառուն մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և դատապարտվել՝

1. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ազատազրկման չորս տարի վեց ամիս ժամանակով՝ առանց գույքի բռնագրավման,

2. ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով՝ ազատազրկման չորս տարի ժամանակով՝ ամբողջ գույքի բռնագրավումով, որը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիմունքներով նշանակված պատիժները մասնակի գումարելով Ղանիել Ֆլորին Ֆեռառուի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում վեց տարի ժամանակով՝ ամբողջ գույքի բռնագրավումով, որը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը:

29. Առաջին ատյանի դատարանը Ղատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում նշել է. «Ղատարանը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք դիտում է այն, որ ամբաստանյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուն նախկինում դատված չի եղել, ընդունում է կատարած հանցանքը, զղջում դրա համար: Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան»:

«Կատարած արարքների համար ամբաստանյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուն ենթակա է պատժի՝ ազատազրկման ձևով»:

30. Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմաններից առնվազն մեկը՝

1. գործի բացառիկ հանգամանքները,

2. խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը:

31. Օրենսդիրը բացառիկ հանգամանքները կապում է հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, ինչպես նաև հանցանքը կատարելիս և դրանից հետո նրա վարքագծի հետ: Բացառիկ կարող են համարվել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը:

Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող հանգամանքների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք ազդել պատժի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածում նշված «բացառիկ» բառը ենթադրում է, որ պատիժը մեղմացնող առանձին հանգամանքը կամ դրանց համակցությունը դուրս է գալիս սովորական հանգամանքների շրջանակից:

Մինչդեռ առաջին ատյանի դատարանի Ղատավճռում նշված ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող առանձին հանգամանքները կամ դրանց համակցությունը այն աստիճանի առանձնահատուկ չեն, որ համարվեն բացառիկ:

Մյուս կողմից, հանցանքը կատարելիս և դրանից հետո ամբաստանյալ Ղանիել Ֆեռառուի դրսևորած վարքագիծը էականորեն չի նվազեցնում հանցանքի՝ հանրության համար

վտանգավորության աստիճանը:

32. Այսպես գործի նյութերից երևում է, որ օժանդակելով հանցակիցներին և անմիջականորեն մասնակցելով գողության դեպքերին՝ Ղանիել Ֆլորին Ֆեռառուն, տեղյակ լինելով ՀՀ դրամի տեսքով զումարի ծագման աղբյուրի հանցավոր բնույթի վերաբերյալ, ծեռնամուխ է եղել այն փոխարկելուն և այդ եղանակով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելուն: Այդ նպատակով 2008 թվականի օգոստոսի 25-ին <<Արդշինինվեստբանկ>> փակ բաժնետիրական ընկերության Երևանի <<Էրեբունի>> մասնաճյուղում իր անձնագրային տվյալներով 2.074.600 ՀՀ դրամը փոխարկվել է 4.600 եվրոյի: Այնուհետև՝ 2008 թվականի օգոստոսի 26-ին, <<Ամերիա բանկ>> փակ բաժնետիրական ընկերության Երևանի Վ.Սարգսյան թիվ 2 հասցում տեղակայված մասնաճյուղում 4.490.000 ՀՀ դրամը փոխարկվել է 10.000 եվրոյի:

33. Փաստորեն առաջին ատյանի դատարանը Ղանիել Ֆեռառուի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների իրավադրույթները, մասնավորապես այն, որ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները, և իրավացիորեն նշանակել է պատիժ, որը համապատասխանում է հանագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին:

34. Այսպիսով, վերաքննիչ քրեական դատարանը նույնպես հանգում է այն հետևության, որ Ղանիել Ֆեռառուի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու կամ նշանակված պատիժը մեղմացնելու հիմքեր չկան:

35. Հետևաբար, Ղանիել Ֆլորին Ֆեռառուի շահերի պաշտպան Անուշ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի դատավճիռը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածով, 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 402-րդ հոդվածով, ՀՀ վերաքննիչ դատարանը à ÷ à Խ ° ÷

1. Վերաքննիչ բողոքը մերժել:
2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի դատավճիռը՝ ամբաստանյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, թողնել օրինական ուժի մեջ:
3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ մեկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան հրապարակման պահից՝ մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ ստորագրություն

ԴԱՏԱԿՈՐՆԵՐ ստորագրություններ
Իսկականի հետ ձիշտ է՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ Հ.ՏԵՐ-ԱԴԱՄՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը:	16-06-2009
Գործն ուղարկվել է:	17-07-2009
Էջերի քանակը:	5 հատոր, 1-ինը՝ 253 թերթ, 2-րդը՝ 279 թերթ, 3-րդը՝ 362 թերթ, 4-րդը՝ 281 թերթ, 5-րդը՝ 235 թերթ,
Գործին կից նյութերը:	վճռաբեկ բողոքը
Գործն ուղարկվել է:	17-07-2009
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	Ե-6633/09
Այլ նշումներ:	չկա

Ամսաթիվ:	27-07-2009
-----------------	------------

Դատական Գործ N: ԵՔՐԴ/0021/01/09

Ամսաթիվ:	14-07-2009
Բողոք բերող անձինք:	Դատապարտյալի պաշտպան

Բողոք բերող անձինք	
Անուն	Անուշ
Ազգանուն	Հովհաննիսյան
Հասցե	ք.Երեվան, Կորյունի 8 բն.5

Հավատարմագրված փաստաբան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	

Դատապարտյալ	
Անուն	Դանիել
Ազգանուն	Ֆլորին
Հայրանուն	Ֆեռառու
Հասցե	Մեծ Բրիտանիա, ք.Լոնդոն, Նյու Բեռնեթ փող., 56 տուն
Չափահաս:	Այո

Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխանի բովանդակությունը:	

Գործի առաքման ամսաթիվը:	17-07-2009
Գրության համարը:	Ե-6633/09
Գործի ստացման ամսաթիվը:	24-07-2009
Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/:	5 հատոր՝ 253,279,262,281,261 թերթ

Դատապարտյալ	
Անուն	

Ազգանուն	
Հասցե	
Գործի համարը:	ԵՔՐԴ/0021/01/09
Գործը ստացվել է:	Քրեական և զինվորական վերաք.
Գործը ստացվել է:	
Գործը ստացվել է:	
Պատասխանատվության ենթարկվածների թիվը:	1
Ամսաթիվ:	24-07-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Դավիթ Զաքարի Ավետիսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Հովհաննես Հաբեթնակի Դուկասյան
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	21-08-2009
Որոշման բովանդակությունը:	ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 16-ի որոշման դեմ ամբաստանյալ Դանիել Ֆեռառուի պաշտպանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձնել:
Ամսաթիվ:	27-08-2009
Այլ նշումներ:	
Գործի առաքման ամսաթիվ:	01-09-2009
Դատարան:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Այլ նշումներ:	